Հայ Կրթական Հիմնարկութիւն

Armenian Educational Foundation, Inc.

ՀԿՀ ՀՀ մասնաճյուղ, Սայաթ-Նովայի պող.,19 շենք, հեռ. 011 53 14 85, www.aef.am

Հիմն. 1950 | Քանի որ կրթությունը կարևոր է | www.aef.am

Հարգելի՛ գործընկեր,

Երկար տարիներ է, ինչ Հայ կրթական հիմնարկությունը կրթաթոշակ է տրամադրում Հայաստանում, Արցախում և Ջավախքում գործող համալսարանների ազգությամբ հայ ուսանողներին՝ ուսման վարձի տեսքով:

Կցանկանայինք նշել, որ մեր ամենամյա կրթաթոշակային մրցույթը 2023-2024 ուսումնական տարվա համար՝ մեկնարկված է:

Կրթաթոշակները տրամադրվելու են տվյալ ուսումնական տարվա ուսման վարձի 90%-ի չափով՝ (ՀԿՀ-ի կողմից վճարվող գումարը չի գերազանցելու 720,000 դրամի շեմը) խրախուսելու և աջակցելու բարձր առաջադիմությամբ և միևնույն ժամանակ նյութապես անապահով ուսանողներին, ովքեր սովորում են ՀԿՀ-ի կողմից նախընտրած մասնագիտություններով՝ https://aef.am/university/

Մրցույթին կարող են մասնակցել ՀՀ պետական բուհերի առկա վճարովի համակարգում 2023 թ-ի սեպտեմբերից 1-ին կուրսում սովորել պատրաստվող (դիմելու պահին դեռևս դպրոցում սովորող) և բարձր կուրսերի ուսանողներ, մագիստրանտներ:

Կրթաթոշակային ծրագրի մրցույթին կարող են մասնակցել ՀՀ քաղաքացիները, սիրիահայ և լիբանանահայ ուսանողները, ինչպես նաև Արցախում և Ջավախքում բնակվող ազգությամբ հայ այն ուսանողները, որոնց ակադեմիական միջին նիշը առնվազն 15, 3, 7 կամ 75 միավոր է: Բացառություն է կազմում միայն ԵՊՀ Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա ֆակուլտետը, որի դեպքում ակադեմիական միջին նիշը կարող է կազմել 11 միավոր:

Պատերազմի մասնակից, վիրավորում ստացած և դրա հետևանքով ընտանիքի անդամին կորցրած ուսանողները կարող են դիմել կրթաթոշակային մրցույթին՝ ունենալով հետևյալ առաջադիմությունը՝ 20/14, 10/6.5, 4/2.8, 100/74:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է լրացնել Կրթաթոշակի առցանց հայտը՝ https://apply.aef.am/

Մրցույթն անցկացվում է մարտի 13-ից մինչև մայիսի 3-ը:

Շնորհակալ կլինենք, եթե կիսվեք տեղեկությամբ ձեր պաշտոնական լրահոսում և իրազեկեք ավագ դպրոցների ձեր գործընկերներին՝ նման կերպ կաջակցեք, որ էլ ավելի շատ ուսանողներ դիմեն ծրագրին և ստանան անհրաժեշտ կրթաթոշակը:

Ի դեպ, այս տարի ՀԿՀ-ի կողմից ամբողջական վճարի տեսքով կրթաթոշակ են ստանում ավելի քան 1200 ուսանողներ:

Մանրամասների և հավելյալ տեղեկությունների համար կարող եք գրել մեր էլ. հասցեին՝ aef@aef.am, կամ զանգահարել (+374)11 53 14 85 հեռախոսահամարով:

Հարգանքներով՝

Հայ կրթական Հիմնարկության

ՀՀ մասնաճյուղի տնօրեն Արմինե Հարոյան

15.03.2023

Հայ Կրթական Հիմնարկություն
Armenian Education Foundation, Inc.
01542952
ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
BRANCH
Branch of Armenian Education Foundation, Inc. in the Republic of Armenia